# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 02

**2024 թվականի ապրիլի 19-ին «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» № ՍՊԴ 38-2024 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ**

*ք. Երևան* « 01 » 11 2024թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս նախագահի Գագիկ Վանոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով սպորտի քաղաքականության վարչության 2024 թվականի հոկտեմբերի 28-ի Ն/31.2/25167-2024 զեկուցագիրը և 2024 թվականի ապրիլի 19-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՍՊԴ 38-2024 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.1-րդ կետը՝ Պայմանագրի Կողմերը համաձայնվեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.2 Պայմանագրի Հավելված N1-ը և Հավելված N2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար Հավելված N1-ի և Հավելված N2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_______________ Հ.Հակոբյան
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա»
հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Մոսկովյան 3,
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570075569370200
ՀՎՀՀ՝ 02509752
Էլ. փոստ՝ armgymnastic@mail.ru
Նախագահ՝
_______________ Գ. Վանոյան
Կ. Տ.

Հավելված N1
2024 թ. 01.11 -ին
կնքված N ՍՊԴ 38 -2024 պայմանագրի

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

| | Իրականացվելիք միջոցառման անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | Պահանջվող գումարը (հազ.դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | **1.Սպորտային ակրոբատիկա**<br><br>**Աշխարհի գավաթ (մեծահասակներ -1)**<br><br>**Ուսումնամարզական հավաք-( մեծահասակներ -1, երիտասարդներ -1)**<br><br>**(Միջազգային մրցաշար-1)**<br><br>**Աշխարհի առաջնություն-(մեծահասակներ-1)**<br>**ՀՀ առաջնություն (մեծահասակներ, երիտասարդներ – 1, պատանիներ 1)**<br><br>**2.Գեղարվեստական մարմնամարզություն**<br><br>**ՀՀ առաջնություններ (մեծահասակներ, երիտասարդներ - 1)**<br><br>**Եվրոպայի առաջնություն -(մեծահասակներ, երիտասարդներ - 1)**<br><br>**3.Ցատկացանց**<br><br>**Եվրոպայի տարիքային առաջնություն-( -1)** | ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում | **«Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա»** հասարակական կազմակերպության կողմից մարզիկների պատրաստում և սպորտային ակրոբատիկա,սպորտայի և գեղարվեստական մարմնմարզություն մարզձևի ՀՀ առաջնությունների և միջազգային մրցաշարերի անցկացում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և միջազգային միջոցառումներին մասնակցություն | Արդյունքները<br>ա) տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության առաջնությունների մասնակիցների թվի աճ.<br>բ) Հայաստանի Հանրապետության առաջնությանը մասնակցող մարզերի, քաղաքների, մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում:<br>Գնահատման չափանիշները<br>Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ: | 2024 թ. դեկտեմբերի 30-ը | 22695.0 |
| | Ընդամենը | | | | | 22695.0 |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011032027<br>ՀՎՀՀ՝ 02698732<br>Գլխավոր քարտուղար՝<br>_______________ Հ. Հակոբյան<br>Կ. Տ. | «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն<br>ք. Երևան, Մոսկովյան 3,<br>Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ, Մյասնիկյան մասնաճյուղ<br>Հ/Հ՝ 1570075569370200<br>ՀՎՀՀ՝ 02509752<br>Էլ. փոստ՝ armgymnastic@mail.ru<br>Նախագահ՝<br>_______________ Գ. Վանոյան<br>Կ. Տ. |

02698732

Հավելված N2
2024 թ. 01.11 -ին
կնքված N ՍՊԴ 38 -2024 պայմանագրի

«11001. ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառումների ցանկ

| | Միջոցառման անվանումը | Միջոցառման վայրը | Միջոցառման ժամկետը | Միջոցառման ֆինանսավորման եռամսյակը | Պետական բյուջեից ակնկալվող գումարը՝ (հազ.դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ցատկացանցի Եվրոպայի տարիքային առաջնություն | Պորտուգալիա | ապրիլ-մայիս | 1-ին կիսամյակ | 1324.4 |
| 2 | ՀՀ տ. տ. խմբերի առաջնություն | Երևան | Նշանակումով | 1-ին կիսամյակ | 175.6 |
| 3 | Գեղարվեստական մարմնամարզություն ՀՀ առաջնություն (մեծահասակներ երիտասարդներ և պատանիներ) | Երևան | 05-08.05.2024 | 1-ին կիսամյակ | 2186.6 |
| 4 | Գեղարվեստական մարմնամարզություն Եվրոպայի առաջնություն | Հունգարիա | 20-27.-05.2024 | 1-ին կիսամյակ | 7813.4 |
| 5 | Ակրոբատիկայի Միջազգային մրցաշար | Ք. Մոսկվա | 29.04-04.05.2024 | 1-ին կիսամյակ | 936.0 |
| 6 | Ակրոբատիկայի Աշխարհի գավաթ | Ք. Բուռգաս | 08-14.05.2024 | 1-ին կիսամյակ | 3827.5 |
| 7 | Ակրոբատիկայի Աշխարհի առաջնություն -կանխավճար | Պորտուգալիա | սեպտեմբեր | 1-ին կիսամյակ | 4417.2 |
| 8 | Ակրոբատիկայի ՀՀառաջնություն (մեծահասակներ) | Նշանակումով | Հունիս-հուլիս | 1-ին կիսամյակ | 1213.3 |
| 9 | Ակրոբատիկայի ՀՀառաջնություն (տարբեր տարիքային խմբերի) | Նշանակումով | Նշանակումով | 2-րդ կիսամյակ | 846.2 |
| | Ընդամենը | | | | 22695.0 |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____________ Հ.Հակոբյան
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Մոսկովյան 3,
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570075569370200
ՀՎՀՀ՝ 02509752
Նախագահ՝
_____________ Գ. Վանոյան
Կ. Տ.